Մէյսարու վանքի ներկայ դրութիւնն այսպէս է այժմ (1890 ամի)։

Վանքը գիւղից դէպի արեւմուտք կէս վերստ հեռաւորութեամբ մի զոգաւոր տեղում շինուած ձորաբերանին՝ նայում է դէպի հարաւ Մուղանու ընդարձակ դաշտի վրայ, հանդէպին երեւում են գիւղօրայքն Մատրասայ, Քարքանջ և Սաղիան։

Տեղը, դիրքը շատ վայելուչ և տեսարանը սրտաբաց, իսկապէս բանաստեղծի բնակավայր, օդն ու ջուրն առողջարար։ Երանի թէ՝ այս վանքը չէն լինէր և մարդաբնակ. շատ յարմար կ'լինէր Դպրեվանք հաստատել և դրականութեամբ պարապիլ, մանաւանդ թէ՝ քաղաքից մօտ լինելով (5 վերստ) շատ դիւրութեամբ կ'պատրաստուի ամեն բան, թէ՛ շինութեան ու նորոգութեան համար և թէ՛ ապրուստի համար։ Ափսոս որ՝ եղբայրական միաբանութիւնը 30-40 տարուց աւելի է, որ պակասել վերացել է այն վանքից. ուստի վանքի թէ՛ տաճարը և թէ՛ սենեակները և միւս բոլոր շինութիւնքը քայքայուած դրութեան մէջ են և կարօտ են նորոգութեան։

Տաճարը յանուն սուրբ Աստուածածնի ընդարձակ և հոյակապ է առանց սեան, որին կից է և միւս տաճարն իբրեւ դաւիթ նորա վեց սեանց վրայ, իսկ տաճարի տանեաց վրայ շինուած է կաթուղիկէն քարեայ, որոյ մէջը սեղան յարմարացրած յանուն Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի։ Ամբողջ տաճարը, կաթուղիկէն և սենեակները շինուած են նեբսից և դրբսից սրբատաշ քարից ու կրից, այս պատճառաւ եւս շինուածոց մեծ մասը շատ ամուր է։

Ամեն շինութիւններն տաճարի և սենեկաց կարելի է նորոգել առ առաւելն 5000 մանէթով, և արդեն լաւ կ'լինէր, որ նորոգուէր և պիտոյանաը վիճակի ժողովրդոց վանական դրպրոցով[1])։

Երանի թէ ազգասէր և ուսումնասէր անձինք մի ընկերու-

---

[1]) Ճարտոյ տպարանատէր պ. Սիմէօնն Տէր Յովհաննէսեան մտադիր էր նորոգել տալ Մէյսարու վանքը իւր ծնողաց յիշատակին։ Աստուած յաջողութիւն տայ։